

## ԱՐԹՈՒՆ ԵՂԻՐ STAY AWAKE

### ՔԱՆԱԻ ՀԱՍՏՐՆԵՐ. ՀԱՅՏ. 3.1-6

***1 Եվ գրի՛ր Սարդիկեում գտնվող եկեղեցու հրեշտակին... «Այսպես է ասում Նա, որ ունի Աստծո յոթ հոգիները և յոթ աստղերը»:***

- **Սարդիկե – «մնացորդ» կարմիր քար (դեղին ստվերում)**

**Չայ. 4.3 - Եւ նստողը հասպիս եւ սարդիոն քարի երեվոյթի նման էր.**

**Եսայի 11.2 – Եվ Տիրոջ (Յահվեյի) Յոգին Նրա վրա պիտի հանգչի՝ իմաստության և հասկացողության Յոգին, խորհրդի և զորության Յոգին, գիտության և Տիրոջ երկյուղի Յոգին:**

«Աստծո յոթ հոգիները». Հին Կտակարանում Սուրբ Հոգու անվանում էր: Ինչու՞ է Հիսուսն այս անունն օգտագործում հենց այս եկեղեցու հանդեպ: Շատ հարանվանություններ իրենց լավ չեն զգում Սուրբ Հոգու հետ. եկեղեցիներում մեծամասամբ այդ պատճառով են բաժանումներ լինում:

Նրանք դեռ օգտագործում էին Քրիստոսի անունը եւ եղել են արտաքուստ մի եկեղեցի Քրիստոսի անունով: Անդամներից շատերը դավանում էին Քրիստոնեությունը, բայց ոչ իսկապես վերածնված:

- **Գովասանք**

***Ոչ մի «գովասանք» չկա այս նամակում:***

- **Անհանգստություն – Չայտ. 3.1**

***1 Գիտեմ քո գործերը՝ որ անուն ունես, թե կենդանի ես, բայց մեռած ես:***

- **Քաջալերանք— Չայտ. 3.2-4**

***2 Արթու՛ն եղիր և հաստատի՛ր այն մնացած(ներին) բաները, որ մեռնելու վրա են, քանի որ քո գործերն Աստծո առաջ կատարյալ չեմ գտնում: 3 Ուստի հիշի՛ր, թե ինչպես ընդունեցիր ու լսեցիր և ամուր պահի՛ր, և ապաշխարի՛ր: Եթե արթուն չմնաս, գողի պես գալու եմ քո վրա, և բնավ չես իմանալու, թե որ ժամին եմ գալու քո վրա: 4 Սակայն Սարդիկեյում անգամ մի քանի անուններ կան, որ չեն կեղտոտել իրենց հագուստները և ձերմակ հագուստով շրջելու են Ինձ հետ, քանի որ արժանի են:***

- **Խոստում հաղթողներին — Չայտ. 3.5**

***5 Նա, ով հաղթի, ձերմակ է հագնելու, ու ես նրա անունը չեմ ջնջելու Կենաց գրքից, այլ նրա անունը դավանելու եմ Իմ Յոր ու Նրա հրեշտակների առջև: 6 Նա, ով ականջ ունի, թող լսի՛, թե Յոգին ինչ է ասում եկեղեցիներին:***

**Ո՞վ է «Յաղթողը»:**

«Քանի որ ամէն ոք, որ Աստուծոց է ծնուած, հաղթում է աշխարհին: Եւ այն է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հավատը: Եւ ո՞վ է, որ յաղթում է աշխարհին, եթէ ոչ նա, ով հաւատում է, որ Յիսուսն է Աստծու Որդին:»: Ա Յովի. 5:4,5:

**I. ԱՐԹՈՒՆ ԵՂԻՐ ՈՐՈՎՋԵՏԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ ՄՈՏԵՑԵԼ Է:  
STAY AWAKE FOR THE END OF ALL THINGS IS NEAR.**

**2 Արթուն եղիր և հաստատի՛ր այն մնացած(ներին) բաները, որ մեռնելու վրա են, քանի որ քո գործերն Աստծո առաջ կատարյալ չեն գտնում: 3 Ուստի հիշի՛ր, թե ինչպես ընդունեցիր ու լսեցիր և ամուր պահի՛ր, և ապաշխարի՛ր: Եթե արթուն չմնաս, գողի պես գայլու եմ քո վրա, և բնավ չես իմանալու, թե որ ժամին եմ գայլու քո վրա:**

**Մատ. 25.1-13** - 1 Այն ժամանակ կնմանի երկնքի արքայութիւնը տասը կոյսերի, որ իրենց լապտերները վեր առան եւ դուրս եկան փեսային դիմավորելու: 2 Նորանցից հինգը իմաստուն էին, եւ հինգը հիմար: 3 Այն յիմարները վեր առան իրենց լապտերները, բայց ձէթ վեր չառան իրենց հետ: 4 Սակայն իմաստուններն իրենց ամաններում ձէթ վեր առան իրենց լապտերների հետ մէկտեղ: 5 Եւ երբոր փեսան ուշացավ, **ամենքը թմրեցին եւ քնեցին:** 6 Եւ կէս գիշերին աղաղակ եղավ՝ Ահա փեսան գալիս է. դուրս եկէք նորան դիմավորելու: 7 Այն ժամանակ ամեն կոյսերը վեր կացան եւ իրենց լապտերները պատրաստեցին: 8 Բայց յիմարներն ասեցին իմաստուններին. Տվեք մեզ ձեր յուղից, որովհետեւ մեր լապտերները հանգչում են: 9 Իմաստուններն էլ պատասխանեցին եւ ասեցին. Միգուցէ մեզ ու ձեզ բավական չլինի. բայց ավելի լավ՝ զնացէք ծախողների մօտ եւ զնեցէք ձեզ համար: 10 Եւ երբոր նորանք զնացին զնելու, փեսան եկավ. եւ պատրաստները նորա հետ հարսանիքը մտան, եւ դուռը փակվեց: 11 Եւ հետո այն միտու կոյսերն էլ եկան եւ ասեցին. Տէր, Տէր բաց մեզ: 12 Նա էլ պատասխանեց եւ ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, Ես չեմ ճանաչում ձեզ: 13 Արդ՝ արթուն կացէք. որովհետեւ չգիտէք ոչ օրը եւ ոչ ժամը, որ նորանում մարդի Որդին կգա:

**1 Թես. 5:2-6** - 2 Որովհետեւ դուք ինքներդ հաստատ գիտէք, թէ Տիրոջ օրը ինչպէս գիշերվա գող՝ այնպէս կ'հասնէ: 3 Վասն զի երբոր կ'ասեն թէ խաղաղութիւն եւ ապահովութիւն է, այն ժամանակ հանկարծակի կ'հասնէ նորանց վրա կորուստը ինչպէս ցավը հղիի վրա, եւ նորանք չեն պրծնի: 4 Իսկ դուք, եղբայրներ, խավարում չէք, որ այն օրը գողի պէս ձեզ վրա հասնի: 5 Դուք ամենքդ լույսի որդիներ էք եւ ցերեկի որդիներ, գիշերինը չենք եւ ոչ խավարինը: 6 Ապա ուրեմն չ'քնենք ուրիշների պէս, բայց արթուն եւ զարթուն լինենք:

**«Արթուն եղիր»**

Մար. 13:33-37 - 33 Զգո՛ւյշ եղեք, **արթուն մնացեք** ու աղոթե՛ք, որովհետև չգիտեք, թե ժամանակը երբ է գալու: 34 Ինչպէս այն մարդը, որ հեռու աշխարհ գնալիս իր տունը կթողնի, իր ծառաներին իշխանություն կտա, յուրաքանչյուրի համար իր գործը կսահմանի, իսկ դռնապանին կհրամայի, որ արթուն մնա: 35 Արդ, **արթուն կացեք**, քանի որ չգիտեք, թե տանտերը երբ կգա՝ երեկոյան, թե՛ կեսգիշերին, հավի խօսելու ժամանակին, թե՛ առավոտյան: 36 “Չլինի թե հանկարծակի գա և ձեզ քնած գտնի: 37 Եվ ինչ որ ձեզ ասում եմ, բոլորին եմ ասում՝ **արթուն կացեք:**

**1 Կոր. 16:13** - Արթուն եղէք, հաստատուն մնացէք հավատքի մէջ, քաջ եղէք, զօրացէք:

## II. ԱՐԹՈՒՆ ԵՂԻՐ ԵՎ ՀԱՆԴԵՐՁԴ ՄԱՔՈՒՐ ՊԱՀԻՐ: STAY AWAKE AND KEEP YOUR GARMENTS CLEAN.

*4 Սակայն Սարդիկեյում անգամ մի քանի անուններ կան, որ չեն կեղտոտել իրենց հագուստները և ձերմակ հագուստով շրջելու են Ինձ հետ, քանի որ արժանի են: 5 Նա, ով հաղթի, ձերմակ է հագնելու, ու Ես նրա անունը չեմ ջնջելու: Կենաց գրքից, այլ նրա անունը դավանելու եմ Իմ Հոր ու Նրա հրեշտակների առջև:*

**Հայտնություն 7:14** – Եվ նա ինձ ասաց. Սրանք են, որ մեծ նեղությունից են գալիս և իրենց զգեստները լվացին ու Գառան արյունով սպիտակեցրին:

**Ժող. 9:8** - Հանդերձներդ թող միշտ սպիտակ լինեն, և գլխիդ յուղը թող չպակասի:

**Աստծո խոսքը ասում է որ դուք Աստծո տաճարն եք և իր Հոգին բնակվում է ձեր մեջ:**

**1 Հով. 1:7** - 7 Իսկ եթե լույսի մեջ ենք քայլում, ինչպես որ նա է լույսի մեջ, հաղորդության մեջ ենք միմյանց հետ, և նրա Որդի Հիսուս Քրիստոսի արյունը մեզ մաքրում է ամեն մեղքից: